ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք.Արտաշատ,Օգոստոսի 23/62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ.՝ / TEL./ 0235/ 2-23-83
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail:
artashatmeria@artashat.am

N Ե-4092
<<22>> օգոստոս 2024թ.

Քլին Զոն ՍՊԸ -ի
Տնօրեն Լ. Ալավերդյանին

ՀՎՀՀ՝ 02662083,
իրավաբանական հասցե՝ Ք.Երևան, Վարդանանց 109/21
էլ. հասցե՝ kananyan0102@mail.ru,
հեռ.՝ +374 44 33 00 30

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/52 ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6–րդ մասով՝ ոչ առկա ֆինանասկան միջոցներով: Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/52 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով Արտաշատի համայնքապետարանի /այսուհետև՝ Գնորդ/ և Քլին Զոն ՍՊԸ–ի միջև /այսուհետև՝ Վաճառող/ 13 հունիսի 2024 թվականի կնքվել է N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/52–1 ծածկագրով <<Մանկական խաղահրապարակների և մարզասարքեր>> մատակարարման պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/: Որպես Պայմանագրի կատարման ժամկետ սահմանվել է «Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում» ժամկետը:
Կողմերի միջև 08 հուլիսի 2024թ. կնքվել է թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/52–1 ծածկագրով պայմանագրի թիվ 01 համաձայնագիրը:
Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանվել է 2024 թվականի հուլիսի 30-ը:
Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում Ընկերությունը չի մատակարարել համապատասխան ապրանքները: Պատասխանատու ստորաբաժանման կողմից վերոգրյալի մասով կազմվել է համապատասխան արձանագրություն:
2024 թվականի հուլիսի 30-ին թիվ S–10515 մտից գրությամբ Քլին Զոն ՍՊԸ–ն խնդրել է Պատվիրատուի ՝ Արտաշատի համայնքապետարանի համաձայնությունը՝ Պայմանագրի 8.8 կետի համաձայն երկարաձգելու պայմանագրի ժամկետը 30 օրացույցային օրով:
2024 թվականի օգոստոսի 12-ին Արտաշատի համայնքապետարանը թիվ Ե-461Ա գրությամբ համապատասխան հիմնավորումներով մերժել է Քլին Զոն ՍՊԸ 2024 թվականի հուլիսի 30-ին թիվ S–10515 մտից գրության պահանջը և առաջարկվել է 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը /հիմք պայմանագրի 2.1.5 կետ/, հակառակ դեպքում Պատվիրատուն կկիրառի պայմանագրի 8.11 կետը:

2024 թվականի օգոստոսի 13-ին թիվ S–11049 մտից գրությամբ Քլին Զոն ՍՊԸ–ն ներկայացրել է ապրանքի մատակարարման հետաձգման պատճառները և խնդրել է չկիրառել Պայմանագրի 8.11 կետը և միակողմանի չլուծել կնքված Պայմանագիրը: Միաժամանակ պատրաստակամություն է հայտնել վճարելու յուրաքանչյուր ուշացած օրվա համար նախատեսված տույժերն ամբողջությամբ:

Քանի որ Քլին Զոն ՍՊԸ–ն չի կատարել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները, ապա

ա.Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի՝ «2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էական նորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի»;

բ. Հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետի՝

«Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին»:

Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ելնելով վերոգրյալից Արտաշատի համայնքապետարանի և Քլին Զոն ՍՊԸ-ի միջև 08 հուլիսի 2024թ. կնքված N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/52-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծել 22 օգոստոսի 2024թ.:

Քանի որ ի հայտ են եկել

ա. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. և Ենթակետի՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»,

բ. Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման

խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով»,
հիմքերը, ապա

Առաջարկվում է Քլին Զոն ՍՊԸ կազմակերպությանը 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում վճարել պայմանագրի ապահովման 320 000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 480 000 /չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ գումարները, որպեսզի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկվելու համար: Հակառակ դեպքում պատվիրատուի ղեկավարը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի Լիազոր մարմնին, իսկ Քլին Զոն ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման ապահովումները սահմանված կարգով կներկայացնի ՀԱՅԷԿՈՆՈՄ ԲԱՆԿ ԲԲԸ՝ վերոնշյալ գումարները գանձելու և Արտաշատի համայնքապետարանի Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ 900415151472 եկամտային հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ աշխատակազմի գնումների բաժնի
Պետ Փ.Հակոբյան
հեռ.՝ 043 12 12 02